

ԵՂԵՄԻ ԱՐԽԻԻՒ ՄԱՍԻՆ ՅԻԾԱՏԱԿՈՒՄՆԵՐ ՀԻՆ ԱՂԲԻԻՐՆԵՐՈՒՄ

Նախնական հետազոտութիւնների արդիւնքները ցոյց են տալիս, որ Սիւնիքի ժայռապատկերները վանկազադափարագիր գրային համակարգ են ներկայացնում, որ ստեղծուել է ոչ ուշ, քան Ք. ա. ԺԲ. հազարամեակում: Մեր կատարած քննութեան ընթացքում պարզել ենք, որ Սիւնիքի ժայռապատկերներում առկայ են շումերական եւ եգիպտական հարիւրաւոր նշանագրեր¹:

Հետեւաբար կարելի է ենթադրել, որ հին քաղաքակրթութիւնները (Շումեր, էլամ, եգիպտոս) հիմնողներն իրենց գրային համակարգերը ստեղծելու պահին պիտի տեղեակ լինէին Հայաստանում վաղուց գոյութիւն ունեցող պատկերագրութեանն ու նրա գործածութեան սկզբունքներին: Նաեւ բնական է, որ նրանք պիտի օգտուէին այդ գիտելիքներից եւ, անշուշտ, պիտի յիշէին ու յիշատակէին այդ գրերի գտնուելու վայրը: Հին միջագետքեան եւ եգիպտական ականդոյթների համաձայն՝ գիրը աստուածային շնորհ է, եւ շումերներն ու եգիպտացիներն այն ստացել են համապատասխանաբար Հայա եւ Թոթ աստուածներից: Սակայն առ այսօր հրապարակուած շումերական ու եգիպտական գրաւոր սկզբնաղբիւրները գրի ծագման առաջնային վայրի մասին ուղղակի աշխարհագրական ցուցումներ չեն հաղորդում:

Շումերա-եգիպտական մշակութային ազդեցութեան ոլորտին պատկանող, սակայն աւելի ուշ ժամանակաշրջանից եկող աղբիւրներում բարեբախտաբար այդպիսի ցուցումներ պահպանուել են: Կարեւոր է, որ մեզ հետաքրքրող տուեալները պահ-

1 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Հ., Հայկական ժայռապատկերների եւ հին աշխարհի գրային համակարգերի ծագումնաբանական առնչութիւնները, Ի Բագմավէպ, 2008, 198-247: ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Հ., Հայկական նշանագրերի ուղին պալեոլիթից մինչեւ միջնադար, Ի Բագմավէպ, 2010, 75-93:

պանուել են այնպիսի հաւաստի ու հեղինակաւոր տեքստերում, որոնց սկզբնաղբիւրները միջագետքեան են:

Մեզ անհրաժեշտ աշխարհագրական ցուցումը նախ գտնում ենք «Յոբելեանների գիրք» կոչուող հին մատեանում²: Ծննդոց գրքի այս պարականոն մատեանը նաեւ կոչուում է «Փոքր Ծննդոց», որում Սինայ լեռան վրայ Մովսէսին յայտնուած հրեշտակը Աստծոյ հրամանով նրան պատմում է արարչութիւնից մինչեւ այդ պահը տեղի ունեցած դէպքերը: Յոբելեանների գրքում յատուկ ուշադրութիւն է դարձուում դէպքերի առաւել մանրամասն ժամանակագրութեանը, եւ այս առումով այն էապէս տարբերուում է Ծննդոց գրքի ժամանակագրութիւնից: Եթէ Ծննդոց գիրքը բերում է միայն երկու յաջորդական դէպքերի միջեւ եղած ժամանակահատուածը, ապա Յոբելեանների գիրքը բերում է բոլոր նշանակալից դէպքերի ժամանակը՝ հաշուած արարչութեան պահից:

Յոբելեանների գրքում մեզ հետաքրքրող հատուածը բերւում է ջրհեղեղին անմիջապէս յաջորդող դէպքերի նկարագրութեան մէջ: Այս աղբիւրը եւս Նոյի տապանի կանգառի լեռ է նշում Արարատ երկրի լեռներից մէկը: Սակայն ի տարբերութիւն Ծննդոց գրքի, Յոբելեանների գիրքը տապանակիր լեռան անունը նշում է Լուբար ձեւով. «Նոյը խաղողի որթեր տնկեց Արարատի լեռներից մէկի՝ Լուբար կոչուող լեռան (լանջին), որի վրայ կանգ առաւ տապանը»³: Տապանի լեռը Լուբար (Lwbr twr') է անուանւում նաեւ մի այլ աղբիւրում՝ պարականոն Ծննդոց գրքում (I Q Genesis Apocryphon), որ 1947ին յայտնաբերուել է

2 Книга Юбилеев, Введ. и рус. пер. проф. прот. Смирнова, А., 2-й вып. Апокрифос Ветхого Завета, Казань 1895. Սկսած այն պահից, երբ Հոռմի Կաթոլիկ Եկեղեցին «Յոբելեանների գիրքը» յայտարարեց պարականոն, Արեւմուտքում այդ գրքի յիշատակումները դադարեցին: Սակայն Յունական Եկեղեցին ժամանակ առ ժամանակ անդրադառնում էր այդ գրքին: Յոբելեանների գիրքը յիշատակում են նաեւ Ը.-ԺԲ. դարերի բիւզանդական հեղինակները (Գեորգ Սինկլլոս, Գեորգ Կեդրին, Միքայէլ Գլիկ, Յովհաննէս Զոնար): Յոբելեանների գրքի ժամանակակից տարբերակը միսիոներ Կրապֆը ԺԹ. դարի 40ական թուականներին յայտնաբերել է Եթովպիայում՝ Եթովպերէն: Հետազոտողները գտնում են, որ գրքի նախնական լեզուն եղել է եբրայերէնը, և այն գրուել է Ք. ա. 160-70 թուականների միջակայքում:

3 Յոբելեանների գիրք, VII:

Քուլմրանի քարանձավում: Այս աղբիւրի Ժ. գլխի 12րդ տողում ասւում է, թէ «... տապանն իջաւ Արարատեան լեռներից մէկի վրայ», իսկ ԺԲ. գլխի 13րդ տողում Նոյի անունից ասւում է. «Ես իմ որդիների հետ սկսեցի հող մշակել եւ ես խաղողի այգի տնկեցի ... Լուբար լեռան վրայ եւ չորս տարի անց այն ինձ գինի տուեց»: Նաեւ վկայւում է, որ Նոյը թաղւում է Լուբար լեռան վրայ. «Եւ հանգաւ Նոյը իր հայրերի հետ ու թաղուեց Լուբար լեռան վրայ, Արարատ երկրում»⁴: Այս վկայութիւնները նաեւ փաստում են, որ տապանակիր Լուբար լեռը գտնւում է Արարատ երկրում՝ Հայաստանում:

Ըստ Յոբելեանների գրքի՝ Նոյի երեք որդիներն իրենց բնակութեան համար քաղաքներ են կառուցում Լուբար լեռան շրջակայքում. Սեմը՝ լեռան արեւելեան լանջին, Յաբեթը՝ արեւմտեան եւ Քամը՝ հարաւային⁵: Սեմի, Յաբեթի ու Քամի սերունդները բազմանում են եւ իրենց համար բնակութեան նոր վայրեր հիմնում: Յոբելեանների գիրքը մանրամասնում է, թէ ինչպէս է Սեմի թոռը՝ Արփաքսադէի որդի Կայինամը (Կայինան) իր քաղաքը կառուցելու համար տեղ փնտռում: Որոնումների ընթացքում. «Նա գտնում է արձանագրութիւն, որ նախահայրերը գծագրել էին Ժայռի վրայ: Եւ նա կարդաց թէ ինչ է գրուած, թարգմանեց այն եւ գտաւ, որ այնտեղ Պահապանների ուսուցանած գիտութիւնն է Արեգակի, Լուսնի եւ աստղերի կառքերի եւ երկնային նշանների մասին»⁶:

Յոբելեանների գրքի այս փոքր հատուածում բերուած նկարագրութիւնից մենք հասկանում ենք, որ Կայինանի յայտնա-

4 Յոբելեանների գիրք, X:

5 Թւում էր, թէ եղբայրներից որեւէ մէկի բնակութեան վայր պիտի նշուէր բարեբեր Արարատեան դաշտը՝ Լուբար լեռան հիւսիսային մասը: Սակայն կարծում ենք, որ սա ուղղակի ցուցում է այն մասին, որ Արարատեան դաշտն այդ Ժամանակներում դեռեւս ջրածածկ էր: Ըստ երկրաբանական տուեալների՝ Ք.ա. Ժ.-ԺԳ. հազարամեակներում Արարատեան ծովը սկսել է նուազել:

6 Յոբելեանների գիրք, VIII: Սեմի թոռ եւ Երերի պապ Կայինանի անունը քացակայում է Մննդոց գրքի երրայերէն բնագրում: Մննդոց գրքի հայերէն թարգմանութեան որոշ ձեւագրեր յիշատակում են Կայինանին, որոշները՝ ոչ: Կայինան անունը մէջբերում են Յովսէփոս Փլաւիոսը, Մովսէս Խորենացին, Մննդոց գրքի յունարէն ձեւագրերը եւ Ղուկասի աւետարանը (Գ, 36)՝ Յիսուս Քրիստոսի ծննդաբանութեան մէջ:

բերած ժայռագրերը Մասիսից արեւելք ընկած Սիւնիքի ժայռապատկերներն են, որոնցում առկայ են Արեգակի, Լուսնի, աստղերի, կառքերի պատկերները: Այն փաստը, որ Կայինանը ընթերցում եւ թարգմանում ու հասկանում է իմաստը, նշանակում է դրանք իմաստակիր գրեր են: Իսկ քանի որ, ըստ Կայինանի հասկացածի, այդ տեքստը վերաբերում էր երկնային լուսատուների շարժումներին ու երկնային նշաններին, ապա տեքստը պիտի ունենար դիցաբանական ձեւակերպումներ⁷:

Հաւատա՞լ, թէ չհաւատալ այս հին գրաւոր աղբիւրի վկայութեանը: Մենք չհաւատալու հիմքեր չունենք, քանի որ մեր վերլուծութիւնը եւս յանգեցնում է այն մտքին, որ հայկական ժայռապատկերները դիցաբանական փոքր սիւժէների վրայ կառուցուած պատկերազրային տեքստեր են⁸: Յոբելեանների գրքի «ընթերցում եւ թարգմանում է» արտայայտութիւնը վկայութիւնն է այն իրողութեան, որ Կայինանը պատկերագիրը ընթերցում ու դարձնում է խօսք՝ թարգմանում է:

Կայինանն իր ապագայ քաղաքատեղիի որոնումներն անշուշտ պիտի սկսէր պապի՝ Սեմի կառուցած քաղաքից, որ Լուբար = Մասիս լերան⁹ արեւելեան լանջին էր: Լերան հարաւակող-

7 Այս թեմային Յոբելեանների գրքից կամ այլ աղբիւրից հաւանաբար ծանօթ էր Ասու Վարդան Արեւելցին (1198-1271): Նա գրում է. «... Արփախադը իր հարիւր երեսունհինգերորդ տարում ծնեց Կայիմանին. սա զարգացրեց Բաղդէութիւնը, գտաւ աստղերով գուշակելու միջոցը, որի համար իր որդիները մրան աստուած համարեցին եւ մրա կենդանութեան ժամանակ մրա արձանը պատրաստեցին ու պաշտեցին այն» (ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ, *Տիեզերական պատմութիւն*, Երեւան 2001, 40):

8 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Հ., Հայկական ժայռապատկերների եւ հիմ աշխարհի գրային համակարգերի ծագումնաբանական առնչութիւնները, ի Բագմավէպ, 2008, 198-247:

9 Լուբարն անկասկած Մասիս լերան ամուսնումներից մէկն է, որի իմաստն ու ծագումը կարօտ է պարզաբանման (ՄՈՒՇԵՂԵԱՆ, Ա., *Ո՞ր լեռնամ վրայ է իջել Նոյեան տապանը*, ի ՊԲՀ 2003, թիւ 1, 3): Լերան Լուբար ամուսնումը երբայական միջավայրից, տուեալ դէպքում՝ Յոբելեանների գրքից է անցել քրիստոնէական գրականութիւն: Երբայերնի համար էլ սկզբնաղբիւր են ծառայել միջագետքեան սեպագիր տեքստերը: Հետեւաբար Լուբար ամուսն ծագումն ու իմաստը պարզելու համար անհրաժեշտ է դիմել սեպագրական տուեալներին:

Քամի որ Լուբար լեռը ներկայացում է որպէս ջրհեղեղից փրկուելու վայր, ապա քանկան է ենթադրել, որ ամուսն իմաստը պիտի կապ ունեն-

մը զբաղեցրել էին Քամի սերունդները, իսկ արեւմտեան կողմը՝ Յաբեթի: Լերան հիւսիսակողմը չի յիշատակում, քանի որ այն,

նայ «ջրհեղեղ» կամ «փրկութիւն» հասկացութիւններից մէկն ու մէկի հետ: Շումերերէնում «ջրհեղեղ» բառն արտայայտում է $URU_2=URU \times UD$ եւ $URU_{18}=URU \times A$ գաղափարագրերի միջոցով: Սակայն, քանի որ URU սեպն ունի LU_8 ընթերցում, UD սեպը՝ PAR , BAR_6 ընթերցումներ, իսկ A սեպը՝ BAR_x ընթերցում, ապա «ջրհեղեղ» իմաստի համար հնարաւոր է նաեւ վերականգնել $URU_2=LU_8 \times BAR_6=Lubar$ եւ $URU_{18}=LU_8 \times BAR_x=Lubar$ ընթերցումներ: Հետեւաբար սեպագիր տեքստի թարգմանը «Լուրար լեռ» անուանման մէջ դրել է «Ջրհեղեղի լեռ» բառացի մշանակութիւնը: Շումերական գաղափարագրի $Lubar$ ընթերցումն ամենայն հաւանակաւորեալ պատկանում է այն սխալ ընթերցումների ու մեկնաբանութիւնների թւին, որոնցով առատ են հետսեպագրական շրջանի երրայեւրէն ու յունարէն տեքստերը: Նշեմք նաեւ թիւր ընթերցումների ու մեկնաբանութիւնների մի քանի օրինակ.

- ա. շումերագէտ Ս. Կրամերը, նկատելով, որ շումերերէն տի բառն ունի «կող» եւ «կեանք» իմաստները, իրաւացիօրէն՝ նոր մեկնաբանութիւն տուեց Ծննդոց գրքում Ադամի կողից Եւայի ստեղծման դրուագին: Իրականում Աստուած Եւային ոչ թէ Ադամի կողից ստեղծեց, այլ Ադամի կեանքից վերցրեց ու ստեղծեց Եւային (հմտ. շումերերէն տի «կեանք» եւ հայերէն տի = «տարիք, հասակ, կեանքի տեւողութիւն»):
 - բ. Ծննդոց գրքում Եղեմից քիտղ ու չորս գլուխների բաժանուող մայր գետը երրայեւրէն քնագրում անուանում է *Nagar*: Այս անուանումն էլ է գալիս շումերերէնից, սակայն շումերերէնում այս սեպն ունի նաեւ *Haia*, *Haya* ընթերցում: Յայտնի է, որ ${}^dEN.KI = {}^dHaia =$ Հայ Աստուածը քաղցրահամ ջրերի տիրակալն է եւ, հետեւաբար, գետի անունն համար շումերական սեպի *NAGAR* ընթերցման փոխարէն պէտք էր վերցնել *Haia* ընթերցումը:
 - գ. Ըստ Նիկողայոս Դամասկացու հաղորդած տեղեկութեան, որ պահպանուել է Յովսէպոս Փլաւիոսի «Հրեական հմախօսութիւն» աշխատութեան մէջ, ջրհեղեղից փրկող լեռն անուանուել է Բարիս: Շումերական շրջանում $BAR(\text{L})$ եւ $MAS, MA\check{S}(\text{P})$ սեպերը տարբերակւում էին, սակայն ասուրա-քաքելական շրջանում նրանք նոյնանում են եւ արտայայտում խաչուող երկու սեպերով (P), որ կարող ենք ընթերցել ինչպէս BAR , այնպէս էլ $MAS, MA\check{S}$: Հետեւաբար ջրհեղեղի լեռն անունը հնարաւոր է ընթերցել եւ Բարիս, եւ Մասիս, որ եւ նիշում է (այս օրինակն ըստ՝ ՄՈՎՍԻՍՅԱՆ, Ա., *Սրբազան լեռնաշխարհը*, Երեւան, 2004):
- Նման օրինակները շատ են, որոնք, մանաւանդ տեղանունների դէպքում, դժուարացնում են այդ տեքստերի հիման վրայ պատմական դէպքերի քննութիւնը:

հաւանաբար, դեռեւս ծածկուած էր Արարատեան ծովից մնացած լճերով ու ճահիճներով: Հետեւաբար Կայինանը պիտի տարածուէր դէպի արեւելք, որտեղ Լուբար = Մասիս լեռան դիմաց հիւսիսից հարաւ ձգւում են ժայռագրերի լեռները՝ Գեղամայ, Վարդենիսի եւ Զանգեզուրի լեռնաշղթաները: Եւ փաստօրէն Կայինանը տեսել ու ընթերցել է այն ժայռագրերը, որոնք այժմ դարձել են մեր քննութեան նիւթը:



Նկար 1. Նմոյշ Սիւնիքի ժայռապատկերներից (լուսանկարը՝ Ս. Շահինեանի)

Յոբելեանների գրքի այս վկայութիւնը հաւատ է ներշնչում նաեւ այն պատճառով, որ դրանք հաստատուում են Հին Կտակարանի Ծննդոց գրքի տուեալներով: Հետազօտողները, ելնելով Յոբելեանների գրքի եւ քումրանեան պարականոն Ծննդոցի միջեւ եղած ընդհանրութիւններից, կարծում են, որ սրանց հեղինակներն օգտուել են մի ընդհանուր աղբիւրից, որ տարբեր է Հին Կտակարանի սկզբնաղբիւրից: Այս պարագայում Հին Կտակարանի վկայութիւնը անկախ է Յոբելեանների գրքից ուստի եւ նոյնքան կամ թերեւս առաւել արժէքաւոր: Հին Կտակարանի վկայութիւնն անկախաբար արժէքաւոր է նաեւ այն առումով, որ

վերաբերում է նոյն ժամանակաշրջանին ու նոյն դէպքերին: Այժմ, այս պարզաբանումներից յետոյ, անդրադառնանք Հին Կտակարանի բուն վկայութեանը:

Հին Կտակարանի Ծննդոց գրքում ասւում է. «Եւ նստաւ տապանն ... ի լերինս Արարատայ»¹⁰, սակայն, ի տարբերութիւն Յոբելեանների գրքի, որոշակի լերան անուն չի նշում: Յոբելեանների գիրքը նաեւ բաւականին մանրամասն նկարագրում է, թէ ինչպէս է Նոյը վիճակահանութեամբ աշխարհը բաժանում իր երեք որդիների միջեւ: Այս առումով եւս Ծննդոց գրքի տուեալներն աղքատիկ են: Եթէ որոշ տուեալներ են հաղորդւում Քամի սերունդների զբաղեցրած տարածքների մասին, ապա Սեմի ժառանգներից նշւում է միայն Եբերի երկու որդիներից Եկտանի եւ նրա 13 որդիների զբաղեցրած տարածքը: Թուարկելով Եկտանի որդիների անունները՝ Ծննդոց գիրքն այնուհետեւ ասւում է.

Հայերէն տարբերակը.

«Եւ եղև բնակութիւն նոցա ի Մասեաց մինչև ի գալ ի Սովփերա լեառնն Արեւելայց»:¹¹

Եբրայերէն տարբերակը.

וְהָיָה מִן הַבָּנִים אֲשֶׁר בְּנֵי נֹחַ
:עֲדָנִי

Յունարէն տարբերակը.

καὶ ἐγένετο ἡ κατοίκησις αὐτῶν
ἀπὸ Μασση ἕως ἐλθεῖν εἰς Σωφηρεα,
ὄρος ἀνατολῶν.

Լատիներէն տարբերակը.

et facta est habitatio eorum de Messa
pergentibus usque Sephar montem
orientalem.

Ռուսերէն տարբերակը.

их земли простираются от Меши на
восток, до Сефарских гор.

Ծննդոց գրքի այս կարճ հատուածից մեր քննութեան նիւթը «Մասեաց» եւ «Սովփերա» տեղանուններն են, որոնք այլուր

10 Ծննդոց Ը, 4:

11 Ծննդոց Ժ, 30: Գիրք Ծննդոց, քննական բնագիր, (աշխտ. Զէթթի-ՆեԱՆ, Ա.), Երեւան 1985:

չեն յիշատակուում: Հետազոտողները դժուարանում են նոյնացնել այս տեղանունները, եւ դրանց ստոյգ տեղադրութիւնը առ այսօր մնում էր անյայտ:¹²

Նախ անդրադառնանք Մասեաց, msa, Μασση, Messa, Месса տեղանունը: Աստուածաշնչեան այս տեղանունը մեկնաբանները¹³ ծագեցնում են եբրայերէն meša = «ազատութիւն, փրկութիւն» բառից: Քանի որ տեղանունը Հին Կտակարանում գործածւում է միայն այս հատուածում՝ յետջրհեղեղեան դէպքերի առնչութեամբ, եւ կազմուած է «փրկութիւն» իմաստը կրող արմատով, ապա մենք բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ այն, որպէս տեղանուն, ներկայացնում է փրկութեան լեռան անունը: այն լեռան, որի վրայ հանգրուանեց տապանը: Այս տեղանուն հանրայայտութեան վկայութիւնն է նաեւ այն փաստը, որ տեղանունը յիշատակուում է առանց աշխարհագրական ցուցիչի (լեռ, երկիր, դաշտ եւ այլն): Անշուշտ յենուելով իրենց ձեռքի տակ եղած յաւելեալ այլ փաստերի վրայ, կարծում ենք՝ նոյն մօտեցումն են ցուցաբերել ս. Մեսրոպ Մաշտոցը եւ ս. Սահակ Պարթեւը, երբ Ծննդոց գրքի թարգմանութեան ժամանակ յունարէն Μασση տեղանունն դիմաց դրել են «Մասեաց»: Հայերէնի քերականութեան եւ հայոց աւանդութեան համաձայն՝ «ի Մասեաց» նշանակում է «Մասիսներից», իմա՝ (Մեծ եւ Փոքր) Մասիսներ տեղանունան յոգնակի բացառական հոլովն է: Ընդ որում, որոշ ձեռագրերում, ինչպէս նաեւ յետագայ աշխարհաբար թարգմա-

12 CHEYNE, T.K. (ed.), *Encyclopedia Biblica*, London, 1903; ВИХЛЯНЦЕВ, В., *Библейский словарь*, Москва 1994: Կայ նաեւ տեսակէտ, թէ Եկտանի որդիների քնակութեան վայրը սահմանագծող այս տեղանունները գտնուում են Արարական թերակղզու հարաւարեւմտեան մասում: Օրինակ՝ Զ. Գիլլը (J. Gill, 1697-1771) կարծում էր, թէ «Մեշան, Պտղոմէոսի եւ Պիմիոսի Մուգան է, որ Կարմիր ծովի մաւահանգիստ էր, ուր յաճախ էին առելորականներ այցելում Եգիպտոսից ու Եթովպիայից»: Մօտաւորապէս նոյն կարծիքն է յայտնում Ու. Սմիթը (SMITH, W., *A Dictionary of the Bible*, 1868-1870), Է. Նիւտրեմը (НЮСТРЕМ, Э., *Библейский энциклопедический словарь*, 1868), Ա. Լոպուխինը (ЛОПУХИН, А., *Толковая Библия*, 1904-1913): Սակայն այս տեսակէտն անհիմն է, քանի որ նախ՝ Արարական թերակղզին ոչ թէ Սեմի, այլ Քամի ժառանգների տարածքն է (*Յորելեանների գիրք*, VIII-IX), եւ երկրորդ՝ այս տեսակէտը հիմնուում է միայն տեղանունների պատահական նմանութեան վրայ եւ այլ հիմնաւորումներ չունի:

13 РИНЕКЕР, Ф. – МАЙЕР, Г., *Библейская Энциклопедия Брокгауза*, 1994.

նուլթիւններում, գրուած է «Մասեայ» (Մասէից) ձեւը¹⁴, որով աւելի ուշ շրջանի հեղինակները տեղանուան գրեւածեւը համաձայնեցրել են մեկնաբանական տեսակէտի հետ: Հայերէն Մասիս տեղանուան եւ եբրայերէն meša=«փրկուլթիւն» բառի միջեւ հաւանաբար կայ խորքային կապ, որի բացայայտումն այս պահին դուրս է մեր խնդրի շրջանակներից: Թերեւս հարկ է միայն նշել, որ Հին Կտակարանի օտարազգի մեկնաբաններին անյայտ էր տապանակիր լերան Մասիս անուանումը, քանի որ դեռ վաղ քրիստոնէական ժամանակներից տարածուած եւ ընդունուած էր Արարատ անուանումը, որն իրականում տապանակիր լերան երկրի անուանումն է:

Այսպէս պարզեցինք, որ Եկտանի եւ նրա 13 որդիների բնակութեան տարածքի արեւմտեան սահմանը փրկութեան լեռն էր՝ Մասիսը: Մնում է պարզենք արեւելեան սահմանը՝ ի դէմս Սոփեր լերան, որ Ծննդոց գրքի հայերէն ձեռագրերում յիշատակում է նաեւ Սովփեր, Սոփար, Սոփոր ձեւերով: Հայոց մատենագրութիւնն ու աւանդոյթներն այսպիսի տեղանուն չեն յիշատակում:


Ինչպէս արդէն նշել ենք, Մասիսներից արեւելք, շղթայ կազմած, ձգւում են Գեղամայ, Վարդենիսի եւ Զանգեզուրի լեռները: Այս լեռնաշղթաներն են հէնց ժայռապատկերների հիմնական կուտակման կենտրոնները, իմա՝ ժայռագրերի լեռները: Ըստ Յոբելեանների գրքի՝ Մասիսից (=Լուբար) արեւելք գնալով այս լեռներում է Եկտանի հօրապապ Կայինանը յայտնաբերում ժայռագրերը: Հետեւաբար Եկտանի ժամանակ ժայռագրերի լերան տեղն անշուշտ յայտնի էր: Եւ այստեղ մեր խնդիրը հանգուցալուծում է, երբ համեմատութեան մէջ ենք դնում «ժայռագրերի լեռ» եւ «Սոփեր լեռ» անուանումները:

«Ժայռագրերի լեռ» եւ «Սոփեր լեռ» անուանումները բացարձակ նոյնական են այն պարզ պատճառով, որ սեմական ծագումով «սոփեր» բառն ունի «գիր, գրութիւն» իմաստ (ասորերէն sefrā=«գրութիւն, գիրք», sāfrā=«գրող», եբրայերէն spr, sfr=«պատմել, հաշուել, գրել», sōfēr=«գրող», արամերէն sāfrā=«գրող», արաբերէն sifr=«գիրք» եւ այլն: Հայ մատենագրութեան մէջ սրանցից փոխառուած «սոփեր» բառը, որ բացարձակ նոյ-

14 Աստուածաշունչ, Արեւելահայերէն նոր թարգմանութիւն, Մայր Աթոռ Ս. Եջմիածին 1994:

նական է Սոփեր լեռնանուան հետ, գործածուել է «գիր, տառ, վանկ, գիրք, մատեան, գրուածք»¹⁵ իմաստներով: Այս բառով է կազմուած Վենետիկում Մխիթարեան միաբանների հրատարակած «Սոփերք Հայկականք» ժողովածուն, որում հաւաքել են միջնադարեան մանր, կարճ գրուածքները: Նման մի Սոփերք Հայկականք են Սիւնիքի լեռներում սփռուած ժայռագրերը, որոնք ի տարբերութիւն Մխիթարեան միաբանների ժողովածուի, ստեղծուել են առնուազն 14-15 հազար տարի առաջ:

Այսպէս, Յոբելեանների գրքի եւ Ծննդոց գրքի տուեալները վկայում են, որ առնուազն Պաղեստինում եւ Միջագետքում (յայտնի է, որ Ծննդոց գրքի սկզբնաղբիւրները միջագետքեան են) գիտէին Հայաստանի ժայռագրերի գոյութեան մասին ու նաեւ գիտէին, որ դրանք գրի են առնուել նախաջրհեղեղեան նահապետների կողմից:



Նկար 2.

Ովկիանոսի մակարդակի բարձրացումը Վիւրման սառցապատումից յետոյ: Օրդիմատների առանցքը ցոյց է տալիս ժամանակի ընթացքը հազարամեակներով, իսկ արցիսիւնների առանցքը՝ ովկիանոսի մակարդակի փոփոխութիւնը մետրերով:

15 Ա.ՅԱՌԵԱՆ Հ., Սոփեր, ի Հայերէն արմատական քառարան:

Այս վերջին վկայութիւնը ժայռագրերի մօտաւոր թուագրման մի նոր հնարաւորութիւն է ընձեռում: Այդ հնարաւորութիւնից օգտուելու համար պիտի դիմենք երկրաբանների օգնութեանը: Երկրի տարբեր կէտերում եւ ժամանակի տարբեր պահերի համար նրանք կատարել են ովկիանոսի մակարդակի չափումներ, որոնք ամփոփուած են վերեւը մէջբերուած (Նկար 2) գծապատկերում¹⁶:

Վերջին՝ Վիլրմեան սառցապատմանը յաջորդած տաք կլիմայի պայմաններում սկսւում է սառցադաշտերի ուժգին հալոցքը, եւ շուրջ 14 հազար տարի առաջ հալոցքի ջրերի առաջին զգալի ալիքը հասնում է համաշխարհային ովկիանոս: Դրան յաջորդած հազար տարիների ընթացքում ովկիանոսի մակարդակը բարձրանում է աւելի քան 30 մ: Կլիմայի յետագայ տաքացման արդիւնքում սկսում են հալել նաեւ Երկրի բարձր լայնութիւններում գտնուող սառցադաշտերը, եւ հալոցքի ջրերի նորանոր ալիքները շարունակում են ջրածածկ անել ծովափնեայ տարածքները: Այդ աղէտալի պրոցեսը աւարտւում է շուրջ 8000 տարի առաջ, որի հետեւանքով ովկիանոսի մակարդակը ընդհանուր առմամբ բարձրանում է շուրջ 120 մ: Զրհեղելի ալիքների աղէտալի հետեւանքներն առաւել շատ զգում են Զինաստանի արեւելքի, Հարաւ-արեւելեան Ասիայի, Հնդկական թերակղզու հարաւի, Միջագետքի, Միջերկրական ծովի ափամերձ շրջանի բնակիչները, որտեղ էլ պահպանուել են ջրհեղեղի մասին առաւել ցայտուն յիշողութիւնները:

Երկրաբանական տուեալները համադրելով Յոբելեանների գրքի եւ Ծննդոց գրքի տուեալների հետ՝ ստանում ենք մի յաւելեալ հիմնաւորում, որ Սիւնիքի ժայռագրերը փորագրուել են Ք. ա. ժԱ. հազարամեակից ոչ ուշ՝ ջրհեղեղից առաջ, եւ նախաջրհեղեղեան նահապետների կողմից:

ՀԱՄԼԵՏ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

16 BINDOFF, N. L. – WILLEBRAND, J. et al., *Oceanic Climate Change and Sea Level*, Cambridge University Press, Cambridge, UK 2007; KEVIN, F. – JOHNSTON, P. – ZWARTZ, D. et al., *Refining the eustatic sea-level curve since the Last Glacial Maximum using far and intermediate-field sites*, in *Earth and Planetary Science Letters*, 1998, 163 (1-4), 327.

Summary

MENTIONS OF THE EDEN ARCHIVE IN THE OLD SOURCES

HAMLET MARTIROSSIAN

The results of the preliminary research have shown that the pictograms, found in the Syunik region of the RA, represent a writing system of ideograms, created not later than in the 12th millennium B.C. Moreover, it was found out that there are hundreds of Sumerian and Egyptian signs in the pictograms of Syunik (see Appendix 1 and Appendix 2). The published Sumerian and Egyptian written sources do not provide direct geographical indications about the primary place of origin of the written language. But such indications are found in the Book of Jubilees and the Book of Genesis, roots of which go to Mesopotamia. According to the Book of Jubilees, Noah's ark rested on the top of the mountain Lubar of the Ararat country. Noah's offspring settled and bred in the neighborhood of the mountain Lubar. One of them Kayinan was looking for a place where he might found his city, and in the course of his search: "He found a writing, which former had carved on the rock, and he read what was thereon, and he transcribed it and discovered that it contained the teaching of the Watchers about the omens of the sun and moon and stars in all the signs of heaven". Hence, this is the precise exposition of Syunik's pictograms.

In the Armenian translation of the Genesis (the 5th century) it is said: "And the Ark rested on the Araratian Mountains", but unlike the Book of Jubilees, a name of a proper mountain is not mentioned. Subsequently, enumerating the names of Yektan's sons, the Book of Genesis states that: "And their dwelling was from Maseats, as thou goest unto Sovpera, a mount of the east". From this short passage of the Book of Genesis the toponyms "Maseats" and "Sovpera", which are not mentioned elsewhere, become our subject of consider-

ation. Scientists are uncertain about identification of these toponyms, and their precise location is unknown to the present days.

St. Mesrop Mashtots and St. Sahak Partev, while translating the Book of Genesis, interpreted the Greek toponym Μάσση as Maseats, which in Armenian literally means “from the (Great and Small) Masis Mountains”. This mountain is known worldwide as Ararat. If the western border of the residence area of Yektan and his 13 sons was Masis, the mountain of Salvation, then there were the mountains of Syunik with their pictograms to the East from them. The Book of Genesis mentions Syunik in form of Soper (Sovper, Sopar, Sopor), since this word with its Semitic origin means “writing” (in Assyrian sefrā = “writing, book”, sāfrā = “writer”, in Hebrew spr, sfr = “to retell, count, write”, sōfēr = “writer”, in Aramean sāfrā = “writer”, Arabic sifr = “book”, etc.). Therefore, the phrase “Soper Mountain” in the Book of Genesis literally means “the mountain of the writings” and indicates Syunik with its pre-Flood pictograms.

...

...

...